Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

«Նկարչություն առանց սահմանների» միջազգային փառատօն-մրցոյթ

Մասնակցութեան պայմաններն ու ընթացակարգը

1. Փառատօն-մրցոյթին մասնակցութեան պայմաններն են՝

Ա) **Ինքնուրոյն աշխատանք**. Աշխատանքը պէտք է լինի ինքնուրոյն նկարուած մասնակցի կողմից. արտատպումների դէպքում մասնակիցը զրկւում է փառատօնի յետագայ փուլերին մասնակցելու եւ իր աշխատանքը ցուցադրելու իրաւունքից:

Բ) **Տարիքային 2 խմբի մասնակիցներ.** 6-12տ. եւ 13-18տ. բոլոր նկարչասէրները:

1. Իւրաքանչիւր տարիքային խմբի մասնակիցները մրցակցում են տվեալ տարիքային խմբի անդամների հետ:
2. Իւրաքանչիւր մասնակից մրցոյթի շրջանակներում ներկայացնում է Գ կետում առաջադրուած **երեք** թեմաներից **երկուսը**:
3. **6-12տ**. մասնակիցների համար **պարտադիր** ներկայացուող թեմաներն են.
   1-ին թեմա՝ Հեքիաթիային դրուագ կամ կերպար
   2-րդ թեմա՝ ազատ ընտրութիւն
4. **13-18տ.** մասնակիցների համար **պարտադիր** ներկացուող թեմաներն են.
   1-ին թեմա՝ Հեքիաթիային դրուագ կամ կերպար
   2-րդ թեմա՝ ազատ ընտրութիւն

Գ) **Փառատօն-մրցոյթին ներկայացուելիք նկարների թեմաներն են.**

1. Հայկական կամ գերմանական հեքիաթներից որեւէ դրուագ կամ (հերոսի) կերպար: **Հեքիաթներն ու համապատասխան առաջադրանքները տե՛ս հաւելուածում**: Նկարին կից անհրաժեշտ է նաեւ **գրաւոր հիմնաւորել** հեքիաթի ընտրութինը՝ պատասխանելով հետեւեալ հարցերին (առաւելագոյնը մէկ էջ A4 թղթի վրայ).
   a. Ինչո՞վ է առանձնանում այս հեքիաթը միւսներից:
   b. Ինչու՞ ընտրեցի հենց այդ հեքիաթային դրուագը կամ կերպարը:
   c. Ի՞նչ սովորեցի ես այդ հեքիաթից:
2. Իմ երկրին, քաղաքին կամ գիւղին բնորոշ խորհրդանիշները
3. Իմ հայրենիքի ապագան

Դ) Նկարչութեան մէջ յետեւեալ նիւթերի կիրառում՝ գունաւոր մատիտներ, ջրաներկ, գուաշ, տուշ, ակրիլ, թուղթ, ստվարաթուղթ, կտաւ։
Ե) Նկարի չափերը՝ DIN A4 թղթի վրայ՝ գոյնը ըստ նախասիրութեան և ընտրուած թեմային համահունչ։
Զ) Նկարչի տուեալները. սպիտակ թղթի վրայ տպագիր տառերով գրել նկարչի **ազգանուն-անունը, տարիքը, քաղաքը** եւ այդ թղթիկը սոսնձել նկարի ետնամասի վերեւի աջ անկիւնունում։

2. Փառատօն-մրցոյթի ընթացակարգը

Աշխատանքների ընտրութիւնը տեղի է ունենալու չորս փուլով.

Փուլ Ա) Ժիւրիի անդամները ընտրում են մասնակիցների աշխատանքներից 36 լաւագոյնները։

Փուլ Բ) Մրցանակին հաւակնոտ 36 աշխատանքները ցուցադրւում են սրահում առանց նկարիչների անունների, եւ հնարաւորութիւն է ընձեռնւում հանդիսատեսին՝ քուեարկելու իր նախընտրելի աշխատանքի օգտին։ **Նկարիչները քուեարկութեանը չեն մասնակցում:** Ընտրւում են երեք լաւագոյն աշխատանք 6-12 եւ երեք լաւագոյն աշխատանք 13-18 տարիքային խմբերի համար՝ ընդհանուր 6 աշխատանք։

Փուլ Գ) Երրորդ փուլ անցած բոլոր 6 մասնակիցները ստանում են առաջադրանք նույն թեմայով եւ մրցում իրենց տարիքային խմբի երեք մասնակիցների հետ։ Ստանալով **90 րոպէ ժամանակ՝** 6 մասնակիցները տեղում նկարում են ժիւրիի կողմից տրուած թեմատիկ առաջադրանքը։ Թույլատրվում է առանձին թղթերի վրայ կատարել էսքիզներ։

Փուլ Դ) Յաղթող աշխատանքները ընտրում են ժիւրիի անդամները՝ յայտարարելով իւրաքանչիւր տարիքային խմբում 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգի մրցանակակիրներին։ Մնացած մասնակիցները ստանում են հաւաստագրեր՝ փառատօնին մասնակցելու համար։

Հովանավոր

House of Resources RheinMain